

ռապանօք և անբաւ վշտակրու թեամբ
կառավարելէն ետքը, իւր հօրեղբորը
նախորդ Վաթոյիկոսին նման առանց
օրհասի չարաչար կնքեց իւր տառա-
պեալ կեանքը, թունաւորուելով այ-
լաղդի իշխանին ձեռօք յամի 1784 և
ի վերջն յուլիս ամսոյ :

Լփրեմ Վաթոյիկոս, ինչպէս կ'ե-
րեւի՝ առաջնորդութիւն վարած ժա-
մանակ շալէպ քաղքին մէջ աշխա-
տասիրած է Յովնանու մեկնութիւնը
ի խնդրոյ Թէօդօրոս վարդապետի ա-
ռաջնորդին Լնտիսբայ, և 1769 ին լը-
րացուցած է : Իւր գրիչը թէպէտ և
չունի ոչ առաջին և ոչ երկրորդ գը-
րակնութեան դարուն փափկու-
թիւնը և քաղցրութիւնը և ոչ անոնց
ոճոյն քաջօրը դարձուածքն ու ճա-
շակը, այսու ամենայնիւ համեմատե-
լով իւր դարուն մէջ գրաբառ լեզ-
ուն յեղափոխութեան ժամանակի
հասարակ եղած խանդարեալ ոճոյն
հետ, կը գտնեմք ասոր մէջ դարձ-
եալ գէթ հետեւողութեան փոյթ մի
հարազատ հայկաբանութեան, ի բաց
առեալ քանի մի անսովոր մակդիրներն
ու բառերը :

Լփրեմ Վաթոյիկոս աւելի մեծ
ծառայութիւն մի եւս ըրած կ'ըլլար
թերեւս, եթէ իւր յաջող գրչաւ
եկեղեցւոյ համար ուսումնական աչ-
խատութիւնը զոհելէն յետոյ, իւր
ժամանակի քաղաքական և ազգային
անցքերն ալ ի գիր արձանացընէր,
և տոհմային պատմութեան վերայ քա-
նի մի թերթ աւելցընէր, որով ա-
ւելի արժողութիւն կ'ունենար իւր
վնհ ճակտէն թափած քրտինքը մարդ-
կութեան առջեւ, ինչպէս ունի մեծ
արժողութիւն իւր նախորդ Վաթո-
ղիկոսին թափած արիւնը առաջի Լս-
ուծոյ :

Սուրբ Լ՛վմիածնի ձեռագրաց ցան-

կին մէջ Լէփիճ վարդապետի Սեդոյ ան-
ուամբ 1231, 1232 համարով մեկնու-
թիւն Յովհաննու ալ կը յիշուին,
զոր մեք գեռ տեսած չեմք, թերեւս
Յովնանու եղած ըլլայ :

Լհաւասիկ մեր քովն եղած Յով-
նանու մեկնութեան յառաջաբանու-
թիւնը, զոր իբր ճաշակ հոս մէջ կը
բարեմք մերապնեայ բանասիրաց հա-
մար :

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Եւ արդ՝ գրէ աստուածային Լ-
ռաքեալն առ հոգէծին զաւակն իւր
և առ մտերիմ աշակերտն Տիմոթէ-
ոս. « Լմենայն գիրք աստուածաշունչք
և օգտակարք՝ ի վարդապետութիւն
են և յանդիմանութիւն և յուղղու-
թիւն և ի խրատ արդարութեան » :
Որով խրատիմք ոչ երբէք դանդա-
ղել յուսումն սուրբ գրոց, այլ միշտ
յայնս պարապել, ցանգ վասն (նոցա)
տքնիլ, և հանապազ առ սեամս իմաս-
տութեան դեգերել : Եւ թէ՛ որքան
օգտակար շահաբերութիւնս ծնանիլ
մեզ յընթեռնելոյ տեսանեմք, այն քաջ
ուշիմ վերծանողացն է յայտ : Կալ
քեզ ուրեմն զերկնուստ հրահանգ-
եալն, տես թէ որպիսի եռաբորբոք
տենչիւ և տիր ստիպմամբ գրէ առ
նոյն աշակերտն. « Յորժամ գայցես,
ասէ, բերջիր զգիրսն, մանաւանդ
զմատեանս » : Լրդ, զոյս կոչէ մատ-
եանս, աղաչեմ, եթէ ոչ զաստուա-
ծաշունչն : Տեսեր, զին ա որ յարու-
սաղէմէ սկսեալ մինչեւ ցլ իւրիկէ
լոօղ եղեւ բանիւ քարոզութեան իւ-
րոյ, կարօտի դեռ ևս զսուրբ գիրս
և զմատեանս՝ որ է աստուածաշունչ-
ըն, ընթեռնուլ, և նովաւ գրեթէ
յարաժամ զմայլիլ : Տինա թօթափել
և մեզ ճահ է յանձնէ զհեղգութիւն

և զխօթութիւն մտաց, և ըստ այնմ տարազու վառել ի սէր Աստուածայնոցն, և բազում քանիւք յառաջանալ ի հրահանգութիւնսնոցա: Բան զի իմաստութիւն՝ ըստ ասելոյ ճեմականաց իշխանին, ոչ ընկողմանի ի փափուկ անկողնոյ, այլ ի դրունս խնդրողաց զնա գեգերի: Բայց այսու աւմենայնիւ ոչ ոք է տակաւին որ լրջացեալ ընդոստնուցու ի վնասաբերքընոյ, այլ յուլացեալք կթեն անձանց իւրեանց զմահառիթն պտուղ, զբաղելով ի զօսանս կրից մարմնականաց, և խորդալով ի քուն անհոգութեանց, և ոչ փոյթ յանձին կալեալ հոգեւորացն: Եւ մինչ այսպէս պանդոյր մըտօք աղամողեալք խեղագարին, ի տիրական բարբառոյն կրեն կշտամբանս. «Բնեցէք զգիրս»: Արդ, զի՞նչ է քննել, եթէ ոչ պարապիլ ի ճաշակ քաղցրութեան հոգեւորականի ընթերեացն, որպէս ճաշակառուն խրախոյս բարձեալ զքաղցրութենէն վարդապետէ մեզ. «Ղաշակեցէք, ասէ, և տեսէք զի քաղցր է տէր»: և թէ՛ «Որպէս զի քաղցր են ի քիմս իմ բանքքո՛քան զմեզր բերանոյ իմոյ»: Եւ ո՛ մատակարար խահարարութեաննալի խորտկացս այսոցիկ, եթէ ոչ նա՛ որ համեղացոյց ի ճաշակելիս մտաց եռաքառեակ դասուն: Որով և մեք կարողասցուք դիել զկաթն բանի հոգեւոր ստեանցս, թարց աղաւաղելոյ զառաջիկայիս տեսութիւն՝ բարեխառութք հասուցուք յանկ:

Բայց չորս հարկաւոր իրք պահանջին յայնցանէ՝ որք յայս գործ տաժանաւոր տառապանօք տենչան յեռնացեալ (1): Եւ իս՝ սրբութիւն սրտի և մաքրութիւն հոգեւոյ, և այնպէս պարապիլ առ տեսութիւն աստ-

ուածային տառից. զի չէ՛ պատշաճ զառածելոցն մեղօք ժպրհիլ ձեռնեւրէց լինել առ հոգեւոր իրողութիւնս՝ զի մի լուիցեն զսպառնալիս, թէ «ընդէր բնաւ պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխտ իմ ի բերանքո՛ւ»: Եւ առ կայծակն ո՞ մատեալ ունեւրօք, արդեօք մեղաւոր ոք և ստորերկրեայ. ոչ երբէք, այլ սերովբէն՝ որ է բորբոքումս սիրոյ: Երկրորդ՝ պահանջի անդորրութիւն ժամանակի. զի որպէս ցրտութիւն անպտուղ առնէ զերկիր, նմանապէս և անանդորր ժամանակ արգել առիթ լինի հոգեւոր գործառնութեանց: Երրորդ՝ պահանջի ապահովութիւն տեղոյ, որպէս զի մեկուսացեալ յըզբաղմանց, ասպ կարիցէ պարապիլ առ այնպիսի գործ մեծագոյն. քանզի հոգք աշխարհի հեղձուցանեն զխորհուրդն եւ առնեն անպրտուղ: Երրորդ՝ առնութեւր ունել զյօլովութիւն տառից, եւ այնպէս հմտանալ ամենայն մակացութեանց. զի ըստ փիլիսոփայից՝ ամենայն նուազեալ խնդրէ զկազմութեան, և ամենայն տառապեալ կարօտի սատարութեան, որքոն՝ ծերք զգաւազան, և կաթնաբոյծ մանկունք զորմն: Օ՛ի սօքօք յաւէտ վայելչանան. որ և Պօղոս համեմատ բանիւք ստորագրէ, «Իբրեւ տղայոց, ասէ, ի Բրիտոս զկաթն ջամբեցի»: Օ՛ի կաթն, եւ թէ ոչ զուսումն վարդապետութեան: Համաձայնի նմին և առաքեալն Պետրոս՝ այսպէս ունեւրով բանին. «Իբրեւ զորդիս ծնեալ անխարդախ կաթինն փափաքիցիմք»: Օ՛ի որպէս հայելին հանդէպ աչաց եղեալ պարզագոյն ցուցանէ զամենայն, նմանապէս եւ աստուածային տառքն՝ զօրէն հայելւոյ լուսաւորագոյն առնեն զմիտս մեր ըստ առաքելոյն, «Եւ յիմ ընդ հայելի

(1) Գուցէ ձեռնարկել:

օրինակաւ տեսանեմք զնա , այլ յայն-
 ժամ դէմ յանդիման : Որոյ յարա-
 ցոյց և օրինակ էր լուացարան խորա-
 նին (1) որ ունէր հայելի յարտաքս ,
 ընդ որս հայեցեալ զանմաքրու թիւնս
 իւրեանց տեսանէին , և ապա ի ներքս
 մտեալ լուանիլ փութային : Հանգու-
 նաբար և սուրբ գիրք որպէս հայելի
 զմեզացն ցուցանեն զանմաքրու թիւնս
 և յորդորեն մաքրել ի մեղաց : Օրի-
 նօքն է գիտութիւն մեղաց , ասէ
 որ Քրիստոսիւն խօսէր Պօղոս : Եւ
 Սիկեբերանն համաձայն բարբառի .
 « Օ, ի ուր օրէնք ոչ , ուստի՞ ռամ-
 կացն բարեղարդութիւն » : Ըսէ եւ
 Ըրիստոտէլ . « Եւ յորութիւնն և ա-
 կանջն է զգայութիւն մակացութե » :
 Որով յայտ է թէ օրինացն գիտու-
 թիւն գրովք սրբովք աւանդեցաւ
 մեզ , որոյ զօգտաբերութենէն լինե-
 լով առականէն իրազեկ՝ ասաց .
 « Իմաստութիւն բարի տայ զնորհս ,
 և ճանաչել զօրէնս մտաց բարեաց է » ,
 և թէ « օրէնք իմաստնոց աղբիւր կե-
 նաց , իսկ անմիտն ընդ որոգայթիւ
 մեռցի » : Ըռակցէ սմին և սուրբն
 Լսկիփան . « Եւ խորխորատ մթին է
 և խոր խաւարատոյ՝ անգիտութիւն
 սուրբ գրոցն բանից » : Եւ դարձեալ
 « Եւրոմն կենաց է , ասէ , և կու-
 բուստ՝ անգիտութիւն սուրբ գրոց » :
 Սորին վասն կանխեցաք առնթեր ու-
 նել զյորովութիւն տառից , որով
 զարգացեալ ի յարբունս հասակի գի-
 տութեան հասանել կարասցեն , եւ
 այնպէս ի կառս բանի աշտանակես-
 ցեն : « Որ գնայ ի տունջեան՝ ոչ դայ-
 թակղի » , ասաց Տէրն . յայտ է՝ որ
 պաշարին ի խաւարէ անգիտութեան՝
 վրիպին : Յայտոսիկ հայեցեալ ասաց .
 « Արագ են բանքքո ոտից իմոց , եւ

լոյս տան շաւղաց իմոց » . իբրու այն՝
 զոր ասաց Պղիտաբոս . « Որպէս ու-
 տարք և պանդուխտք ի ճանապարհի ,
 նոյն իսկ և անխրատ մնացեալքն ի
 գրոց՝ ի յիրաց իւրեանց արտուղին
 և մոլորին հանապազ » : Թուչուն փետ-
 րաթափիկ կարէ՞ թեւապարել ի վե-
 րայ օդոց , աղէ՞ ասա ինձ . և թէ նո-
 քա այնպէս , ապա և մեզ անմարթ
 է թարց ստանալոյ զերկուս թեւս ,
 այսինքն՝ զգործնական և զտեսական
 գիտութեան , թեւ ածել առ այսպիսի
 բարձրագոյն տեսութիւն : Օ, ի տի-
 րապէս այնոցիկ է այս գործ , որք կար-
 շնեղացեալ են ամենայն մակացու-
 թեամբ , և այնպէս վստահութիւն
 առեալ հանգիստացին հետազօտել
 զառակս իմաստից և զճառս նոցին :

Իայց առ մեզ իյեռակի նախա-
 սացեալ կարեւոր եւ պիտանացու
 պատճառացն և ոչ մի ինչ գտանի առ-
 ձեռն պատրաստ , այլ մանաւանդ նո-
 րին հակառակօքն լցեալ : Այս զա-
 ռաջինն ի յառաջին տիոց կորուսաք :
 Յար և նման և զերկրորդն բազմա-
 վորդով ժամանակի առդիպելով մեր ,
 յորում հողմոց խորշակի և տապա-
 խառնի զփորձ առաք . և անկաւ ըզ-
 գլխով մեր արեւ կիզանող զանազան
 վտանգի ի զանազան կողմանց իբր ի
 յականց բղխեալ . յորում ամի սկսաւ
 և գոռ աղմկի ի մէջ ինքնակալ կայսեր
 սարակինոսաց և հեղգազարհուր աղ-
 գին Սոսկովոյ . որպէս զմոքենին ի
 մէջ հրոյ՝ պահեսցէ Նստուած զազգս
 Հայոց : Ամանապէս և երրորդն , զի
 փոխանակ ապահով տեղում՝ իբր ի կա-
 մաւոր դիպտահոյ բազում տառապա-
 նօք կոչկոծիմք անդուլ վարանմամբ :
 Եւ մինչ յայսցանէ յայտնապէս զըբ-
 կեցաք , հապա ի չորրորդն դիմեոյութ
 վշտագին անձամբ . զի դէթ հոգէ-
 խառնութիւն առեալ ի հոգեկիր

(1) Եւթ ԼԸ 8 :

հարցն՝ դէպ ուղիղ յառաջացուք յընթացս բանից :

Եւ արդ՝ այսուհետեւ, եղբայր իմ Թէոփորոս բաբունապետ, փութասցուք ընդ զայս իմաստ աստուածաշին ըզձից քոց, դուզնաբեայ և դադդաչելի⁽¹⁾ բանիւք. ոչ եթէ սեթեւեթեալ բազմաբանդակ մանուածովք պերճացուցուք, և ոչ դեղնուկ բանիւք աղաւաղեսցուք. այլ յերկաքանչիւրոցն զանգիտեալ հեռացուք ի ծայրայեղ խոտորմանց զարքունաւանն ընարելով պողոտայ : Եւ ոչ դարձեալ ի լուծեան պատճառաց իբր յանդգնելոց աչառութեամբ երկուցեալք կասեսցուք ի բարեգոյն յօժարութեան. այլ պարսաբարեսցուք զնոսա բանիւ մարգարէին, որ անօրինելոցն է՝ ասացուք՝ անօրինեսցի, եւ որ բարկանալոցն է՝ բարկացի, վառեալ նախանձու և ատելութիւն : Այս սրբոյն բանք յառաջացին մեզ, որք են հանգիսագիրք նորահրաշք և արբանեակք երանաւէտ կենացն, որպէս զթիրախ տրձանացին հանդէպ աչաց մերոց, և որպէս զճրագ առաջի ընթացին մեր՝ ոչ խոտորել յաջ և յահեակ : Եւ խորշեսցուք ի լեզուագարացն աւելաբանութեանց, որպէս ի մահանուէր կերակրոյ. և վարկեսցուք զբանս նոցա իբր զհնչմունս հոգմոց, և իբրեւ զդողանջմունս գորտաց : Այսն զի աստուածային տառքն են որպէս զմարմին շուրջ պատեալ զոգուով, և որք ի կեղեւս բանից յառիցեն զաչսն՝ զինչ անտի կթեսցեն, յայտ է զբառնութիւնս, ըստ կապկաց գտեալ զընկոյզն ընդ կեղեւոյն դառն, յետս խուսին անգիտանալով զքաղցրութենէն որ ի ներքս . . .

. . . Այս զայնոսիկ որք լուսագար-

եալք տեսութեամբ մտաց ի լսելիս մարմանջեալք խաթարել զմիտս սիւզրոց դեգերին, թողցուք յիրաւանց ժամադրեալ տեղին դատել, և մեք որ առաջի կայ մեր՝ դիմեսցուք : Որ և մեծ գթութիւնն և անճառ սէրն Աստուծոյ կարողացուցէ զմեզ հասուցանել յանկ զտեսութիւն մարգարէութեանն Յովնանու, որ յարեաւ յաւուրս Աքաղու, և ըստ ումանց՝ յաւուրս Ողիայ և Յովնաթանու :

Իայց զգաստութիւն ոչ փոքր պիտոյ է մեզ, այլ բազում և յոյժ առաւել, ցանգ դեգերմամբ և ներկայ աշխատելի քրտամբ, և ընթեռնու ընեւս մտաւորաբար, որով անվաւեր և անստգիւտ լիցի, և մի տարտամ անձին իմոյ եպերանք : Եւ սմին ոչ բաւելով հիւժեալս վերջին աղբատութեամբ մտաց, ի գործակցութիւն տկարութեան իմոյ՝ կարօտիմ սուրբ Հոգւոյն ի թիկունս հասանել, ըստ օրինակին որ ի Սոլսէս բնակելով զեթանասուն ծերսն ըստ բաւականին ելից, և Եղիսս կրկին պարգեւօք փայլեցաւ. որով ըստ պատշաճին կտրացուք տողել զբանս, և մի յանձին զօրութիւն վստահացեալ խիղախիցիմք և աղաւաղելի զտեսութիւն սորա արացեմք : Այլ նովաւ զնորս անդնդոց իմաստից խուղել մարթացուք և բարեք վերձանութեամբ հետազօտել կարացուք, զի մի յառասպարն սերմանելով լիցի զուր աշխատանքն մեր և ընդունայն վաստակքն : Այլ նախ զկրթութիւնն հոգւով զօրացեալ ի բաց ապաշաւեսցուք, և ապա յանմարտութիւն սորա յառաջացուք. և ո՞ արժանապէս կարացէ իմանալ զիմաստս հոգւոյն, եթէ ոչ աստուածային հոգւովն, որպէս Եղեկիէլիւ վստահ ա-

(1) Այսպէս օրինակին մէջ. Թերեւս Դմիտրիէի :

րար զմեզ. «Ահա ասիկ ես ածեմ ի վերայ ձեր շունչ կենդանի, և տաց զոգի իմ ձեզ»: Ուրեմն չէ յանկաւոր վայրագասուն մտօք և հունաւոր սահմանացն իբր մարդկային ու շինութեամբ զաստուածային իմաստ քննել. զգաստութիւն ոչ փոքր պիտոյ է մեզ որպէս և ասացաք: Օհ չէ ահաւոր վարկաբարդի անցանել ընդ բանս նոցա. և չէ դէպ փոքր համարիլ զզօրութիւն իմաստիցն որ ի նոսա. այլ մտացն թեւօք թռուցեալ վերաբերին առաջնորդականին մերոյ բացատրել զառ ի նոցանէն ասացեալն: Բեր այսուհետեւ ինոսին ի բանս մարդարէին երթիցուք որ ասէ:

ՀԵՂԻԱՍՏԱՆԻ ՃԵՐՄԱԿ ՓԻՂԸ

Փղապաշտութեան ծագումը. — Ճերմակի քիչ քննադատող հնարագիւր հայր. — Կոստանայի ակումն:

Ի իրմանիայի փիղերը աշխարհիս ամեն փիղերէն գեղեցկագոյններն են. և գերազանց քան զհնդկաստանին, Պէնկալային, Սելան կղզւոյն ու Սիա մին: Սակայն այս ետքի երկիրներուն մէջ աւելի մեծ կարեւորութիւն ունին փիղերը ճամբորդութեանց դրժուարութեանը համար: Փիղերուն առաջին ծագումը շատ բարակ քննութիւններով իմացուած է Սանտալէյ քաղքին մէջ ըլլալը: Ներմակ փղին վրայօք շատ առասպելներ հնարուած են, այնքան որ մեծ զգուշութիւններ պէտք կ'ըլլայ անոնց վրայօք ճշմարիտ տեղեկութիւն հաղորդել ու զօղներուն:

Ա.

Պուտտութիւնը (1), Սմարանայից կամ

(1) Le bouddhisme,

Անիտիսականաց կրօնը, Հնդկ — ասիական ցամաքի և իւր բազմութիւն արշիպեղագոսներուն մեծագոյն մասին մէջ տարածուած է: Առանց չափազանցութեան եղած հաշիւներու նա յելով Պուտտական աղանդաւորաց թիւը երկու միլիոնի կը հասնի. այլ եւ Չինու և Բուդինչինայի մէջ ալ ունի պաշտօններ կան:

Պրահմանութեան վերայ պատուաւորաւ անոր մէկ վերանորոգեալ ճիւղը կը համարի Պուտտութեւն շատ աղանդներու կը բաժնուի: Սեր միտքը հոս այս զանազան աղանդաց, այսինքն 1 ամաններուն, Գալափոններուն, Սահաններուն, Փօօնկիներուն և Պոնցերուն մէջ եղած հեռաւոր տարբերութիւնները հաստատել չէ. այլ կ'ուղեմք միմիայն մեր առարկային վերաբերեալ վարդապետական կէտերը նշանակել հոս:

Ինչոր Պուտտականաց հասարակ եղած մէկ կարծեաց համեմատ, տիրող Իմացականութիւնը, Բանն վերացեալ և բացարձակ, նախկին ՊՈՒՏՏԱՆ, նախագոյակն էութեամբ, կ'ըզբաղի միշտ դէպ ի կատարելութիւն տանիլ զմարդկութիւնը: Այս վախճանիս համար կը մարմնանայ, որոշեալ միջոցներու մէջ, իմաստնոց կերպարանքն առնելով, որոնց պաշտօնն է բարւոյն կիրառութիւնը մարդոց սորվեցնել: Այս առաքեալները որ Պոպպա ալ կը կոչուին, համարին իբր նախասահմանեալք և մասունք աստուածային տարեր: Աստուածութիւն մասնական յայտնութիւնները դեռ չըջան մի կատարելութիւն միջոցի մէջ պիտի շարունակուին և այս շրջանը ցորչափ տեւէ, աղանդները իրարմէկալի տի զանազանին. — ոմանք այս շրջանը հինգ տարի, և ոմանք միլիոնաւոր տարիներ սլիտի տեւէ կ'ըսեն. — յետ